# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Փետրուարի 4-ին, կիրակի.- Դ. կիրակի զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Ես եմ, մի երկնչիք» (Մատթ. ԺԴ 27) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրուարի 10-ին, շաբաթ.- Սրբոցն Սարգսի զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ չորեքտասան զինուորացն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սահակ աբղ. Շաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը քարոզ խոսեց՝ «Ամենասուրբ Երրորդութեան ընտրեալ ծառայ եւ հաւատարիմ» (Շարական) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրուարի 11-ին, կիրակի.- Ե. կիրակի զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գալուստ վրդ. Դարբինյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Երանի, որ քաղցեալ իցեն արդարութեան» (Մատթ. Ե 6) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրուարի 14-ին, չորեքշաբթի.- Պահք: Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Զարեհ վրդ. Ավետիքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղութեամբ արձակիր քո ծառային» (Ղուկ. Բ 29) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրուարի 18-ին, կիրակի.- Զ. կիրակի զկնի Ծննդեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս վրդ. Հովնանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 49):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրվարի 20-ին, երեքշաբթի.- Սրբոց Ղեւոնդեանց քահանայից:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը: Հընթացս Ս. Պատարագի Սրբազան Հոր ձեռամբ կատարվեց ճեմարանավարտ չորս սարկավագների՝ Վաղարշակ Ծատուրյանի, Արսեն Բարսեղյանի, Սահակ Գասպարյանի, Արամ Մալխասյանի և Սերժ սրկ. Մայիլյանի քահանայական ձեռնադրությունը:

Ձեռնադրության ավարտին Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Փետրվարի 22-ին, հինգշաբթի.- Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն եւ վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ Պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, կատարվեց Հայրապետական մաղթանք:

***Փետրվարի 25-ին, կիրակի.- Բուն Բարեկենդան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ ծ. վրդ. Պերպերյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Մարտի 4-ին, կիրակի.- Բ. կիրակի Քառասնորդական Պահոց (Արտաքսման):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տիրայր քհն. Գըլըճյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Տաթև արքեպս. Սարգսյանը քարոզ խոսեց՝ «Շնորհեա մեզ, Տէր, ճաշակել զքաղցրութիւն քոց պատուիրանաց» (Շարական) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Մարտի 11-ին, կիրակի.- Գ. կիրակի Քառասնորդական Պահոց (Անառակին):***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ավետիս աբղ. Սահակյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Մարտի 18-ին, կիրակի.- Դ. կիրակի Քառասնորդական Պահոց (Տնտեսին):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն աբեղա Նանյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Մարտի 25-ին, կիրակի.- Ե. կիրակի Քառասնորդական Պահոց (Դատավորին):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գևորգ աբղ. Սարոյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Թադեոս վրդ. Ջիրեկյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: